

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1

ADDITIONAL AGREEMENT № 1

24.03.2017թ. № 15/019 պայմանագրին կից

Attachable to the agreement № 15/019 dated 24.03.2017

ք. Մեծամոր

19.06.2017թ.

Metsamor

19.06.2017

ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ ի դեմս «ՀԱԷԿ» ՓԲԸ
տնօրենների խորհրդի նախագահ Վահրամ
Պետրոսյանի

The Client represented by the ANPP CJSC
Chairman of Directors Board Vahram Petrosyan

և ԿԱՏԱՐՈՂԸ՝ ի դեմս «Գրանթ Թորնթոն
Աուդիտ» ՍՊԸ կառավարիչ Օլեսյա Բրայդի կնքեցին
սույն Լրացուցիչ համաձայնագիրը հետևյալի մասին.

and **the Contractor** represented by Olesea Bride as
administrator of **Grant Thornton Audit SRL**, have
entered into this Additional agreement as follows:

1. Քննարկելով ընկերությունների միջև 24.03.2017թ.
կնքված № 15/019 Պայմանագրի (գնման
ընթացակարգի ծածկագիր «ՀԱԷԿ-ՊԸԾՁԲ-
1/17» ֆինանսական հաշվետվությունների
անկախ աուդիտ ծառայություն) պայմանները՝
(Հիմք՝-Գլխավոր հաշվապահի Ծառայողական
Գրությունը).

1. Discussing the terms (Basis – Office
Memorandum of the Chief Accountant) of
the № 15/019 Agreement (**PURCHASE
AGREEMENT ՀԱԷԿ-ՊԸԾՁԲ-1/17 OF AN
INDEPENDENT AUDIT SERVICE FOR
FINANCIAL STATEMENTS**) signed on
24.03.2017 between the companies:

Կողմերը որոշեցին՝

The Parties have decided

1.1 Հավելված № 1-ում «1. Նպատակը» բաժնում
թ/ կետի բովանդակությունը փոփոխել հետևյալ
կերպ. «Աուդիտորը պետք է նաև նշի, թե արդյոք
«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն կրել է ծախսեր, տվել կամ
վերցրել է փոխառություններ, որոնք կապված
չեն հիմնական գործունեության հետ, ինչպես
սահմանված է Համաշխարհային բանկի և
Հայաստանի Հանրապետության միջև
էներգետիկայի ոլորտի ֆինանսական
առողջացման ծրագրի Վարկային
Համաձայնագրում և դրա հետ կապված այլ
փաստաթղթում»;

1.1 To replace the wording of point (i) in the
1. Objective of the Appendix № 1 with the
following content: The Auditor shall also
mention whether ANPP CJSC has incurred
expenses, provided or received
borrowings that do not relate to the core
activities, as prescribed in the Loan
Agreement of Power sector financial
recovery Program and other relative
documents signed between the World
Bank and the Republic of Armenia.

1.2 Հավելված № 1-ում «4. Ի հավելումն վերոհիշյալ
ծառայությունների, աուդիտորը պետք է
իրականացնի նաև սույն առաջադրանքները»
բաժնից առաջ ավելացնել «4. Աուդիտորական

1.2 To add a point **4. Audit Reports** section
before the point 4. **In addition to the
above mentioned services, the auditor
shall also implement the following tasks**

հաշվետվություններ» բաժին՝ հետևյալ բովանդակությամբ. «Աուդիտորը «ՀԱԷԿ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ պետք է աուդիտորական կարծիքներ կայացնի՝ նշելով, թե արդյոք այդ ֆինանսական հաշվետվություններն ըստ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվության միջազգային ստանդարտների, ապահովում են կառույցի՝ 31.12.2016թ. ֆինանսական տարվա վերջի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա գործառնական արդյունքների վերաբերյալ ճշմարիտ և իրական պատկերը: Աուդիտորական հաշվետվության մեջ՝ առանձին բաժնում, որը վերնագրված է «այլ իրավական պահանջների վերաբերյալ Հաշվետվություն», աուդիտորը հաստատելու է, թե արդյոք «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն կատարել է հիմնական գործունեությանը չառնչվող ծախսեր, չկրելու, պարտքեր և պարտավորություններ, ներառյալ փոխառություններ չվերցնելու և չտալու, ինչպես նաև դրամաշնորհներ չտրամադրելու վերաբերյալ իրավական պայմանը /ինչպես սահմանված է էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագրի՝ Համաշխարհային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված Վարկային համաձայնագրով և դրա հետ կապված այլ փաստաթղթերով/: Այդ բաժինը պետք է նկարագրի վերոնշյալ իրավական պայմանը չկատարելու յուրաքանչյուր դեպք: Ի հավելումն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիքի, աուդիտորը պետք է պատրաստի նաև ղեկավարությանն ուղղված նամակ, որում աուդիտորը պետք է.

section in the Appendix 1 with the following content.: The Auditor shall express auditor's opinions on the financial statements of ANPP CJSC mentioning whether those financial statements give a true and fair view of the financial position as of 31.12.2016 and operating results of the organization for the year then ended in accordance with International Financial Reporting Standards as issued by the International Accounting Standards Board. The auditor shall confirm whether ANPP CJSC has complied with the legal requirement of not incurring expenses unrelated to its core activity, not receiving or providing debts and liabilities including borrowings, and not providing grants (as prescribed in the Loan Agreement of Power sector financial recovery Program and other relative documents signed between the World Bank and the Republic of Armenia) in a separate section under heading "Report on other legal requirements". This section shall describe each instance of violation of the above legal requirement. In addition to the auditor's opinion on the Company's financial statements, the auditor shall also prepare a management letter, where the auditor shall.

ա) ներկայացնի աուդիտի ընթացքում ուսումնասիրված հաշվապահական գրանցումների, համակարգերի և ներքին հսկողության մեխանիզմների վերաբերյալ իր

a) provide comments and observations on the accounting records, systems, and controls that were examined during the course of the audit;

մեկնաբանություններն ու դիտարկումները.

բ) նույնականացնի համակարգերի և հսկողության մեխանիզմների թերություններն ու թույլ տղակները և կատարի դրանց բարելավման առաջարկություններ.

գ) ներկայացնի ֆինանսական համաձայնագրի դրույթների խախտման դեպքերը.

դ) ներկայացնի այն խնդիրները, որոնք ի հայտ են եկել աուդիտի ընթացքում և կարող են էական ազդեցություն ունենալ ծրագրի իրականացման վրա.

ե) ներկայացված տեղեկատվությունը պետք է լինի հստակ, համառոտ և ամբողջական՝ բացառելով որևէ փաստացի անճշտություն, միաժամանակ ներառելով նաև աուդիտորական ապացույցների հաշվարկներն ու գնահատականները, ինչպես նաև հղումներ օրենսդրության պահանջներին.

զ) վարկառուի ուշադրությունը հրավիրի բոլոր մնացած այն խնդիրների վրա, որոնք աուդիտորի տեսանկյունից կարևոր են.

է) ղեկավարությանն ուղղված նամակում ներառի ղեկավարության դիտողությունները.

ը) իրազեկի նոր պարտքեր չկուտակելու պարտավորության կատարման վերաբերյալ (եթե Բանկի հետ այլ բան համաձայնեցված չէ), քանի դեռ «ՀԱԷԿ» ՓԲԸ եկամուտների և ծախսերի հիմնավորված կանխատեսումները ցույց չեն տա, որ այդ պարտքի գոյացման ընթացքում յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար «ՀԱԷԿ» ՓԲԸ կանխատեսված զուտ եկամուտները Վարկային Համաձայնագրերով սահմանված սահմանաչափերով չեն գերազանցում այդ

b) identify specific deficiencies and areas of weakness in systems and controls and make recommendation for their improvement;

c) report on instances of non-compliance with the terms of the financial agreement;

d) communicate matters that have come to their attention during the audit which might have a significant impact on the implementation of the project;

e) The presented information shall be distinct, brief and full excluding any actual inaccuracy, and including calculations and estimates of audit proves and references to requirements of laws at the same time,

f) bring to the borrower's attention any other matters that the auditor considers pertinent;

g) include management's comments in the final management letter,

h) inform on implementation of obligation of not accumulating new debts (unless other is agreed with the Bank) until reasonable predictions of ANPP CJSC's income and expenses do not reveal that during the origination of the debt, the ANPP CJSC's net income for each financial year do not exceed limits defined in the Loan Agreement all the debts for that year including the amounts necessary for servicing debts of ANPP CJSC subject to

տարվա բոլոր պարտքերի՝ ներառյալ «ՀԱԷԿ» ՓԲԸ կուտակվելիք պարտքերի սպասարկման համար պահանջվող գումարը:

Եթե աուդիտի արդյունքում վերը ներկայացված խնդիրները չեն հայտնաբերվել, հետևաբար ղեկավարությանն ուղղված նամակ չի պատրաստվում, այդ դեպքում աուդիտ իրականացնողը պետք է ներկայացնի նամակ, որում նշվում է, որ աուդիտ իրականացնողի կողմից ուշադրության արժանի թվարկված խնդիրները չեն հայտնաբերվել:

Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ աուդիտորի կարծիքը և ղեկավարությանն ուղղված նամակը պետք է ստացվի «ՀԱԷԿ» ՓԲԸ կողմից աուդիտի ենթարկված ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ քան վեց ամիս հետո: «ՀԱԷԿ» ՓԲԸ պետք է անմիջապես ներկայացնի երկու օրինակ Համաշխարհային բանկ:

1.3 Հավելված 1-ի 4. «Ի հավելումն վերոհիշյալ ծառայությունների, աուդիտորը պետք է իրականացնի նաև սույն առաջադրանքները» բաժինը վերածվում է կետ 5.-ի հետևյալ բովանդակությամբ.

5.1 Աուդիտորը պետք է պարտադիր անդրադառնա միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող ստորև նշված վարկային ծրագրերի նպատակային օգտագործման հարցին և դրա մասին տրամադրի տեղեկատվություն ղեկավարությանն ուղղված նամակի միջոցով.
Ներկայումս ՀԱԷԿ-ում իրականացվում են երկու ծրագրեր.

5.1.1. ՀԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման ծրագիր (Համաձայնագիր ՀՀ Կառավարության և ՌԴ Կառավարության միջև՝ կնքված 05.02.2015թ.), որի սահմաններում ՀԱԷԿ-ին տրամադրվել է

accumulation.

If the audit does not result in the identification of the above issues, and a management letter is therefore not prepared, the auditor will issue a letter stating that during the audit nothing has come to their attention that the auditor considers pertinent.

The financial statements, including the audit opinion, and management letter should be provided to ANPP CJSC no later than in six months after the end of the audited fiscal year. ANPP CJSC should then promptly forward two copies of these to the World Bank.

1.3 Point 4. "In addition to the above mentioned services, the auditor shall also implement the following tasks" section in the Appendix 1 becomes Point 5 and with the following content:

5.1 The auditor shall necessarily reflect and present information through management letter regarding targeted use of loan projects funding by international organizations, in accordance with the loan agreements presented below. Currently the ANPP implements two projects:

5.1.1 Extension of the ANPP Second power unit lifetime project (Agreement between the RA Government and the RF Government signed on 05.02.2015), in

270.0 մլն ԱՄՆ դոլարի վարկ և 30 մլն. ԱՄՆ դոլարի գրամաշնորհ:

the scope of which loan at the amount of 270.0 million US dollars and grant at the amounts of 30 million US dollars were provided to the ANPP.

5.1.2. Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման Ծրագիր (ՎՀՄԲ վարկային համաձայնագիր 8615-AM, Program-For-Results, ստորագրված 2016թ. Մայիսի 12-ին), որի սահմաններում ՀԱԷԿ-ին հատկացվել է 8.55 մլն. ԱՄՆ դոլարի վարկ:

5.1.2 Power sector financial recovery Project (Loan agreement 8615-AM, Program-For-Results, signed on May 12, 2016), in the scope of which loan at the amount of 8.55 US dollars was provided to the ANPP.

5.2 Աուդիտը նաև ընդգրկելու է ՀԱԷԿ-ի ծախսերի, վերցրած և տված փոխառությունների քննություն՝ հաստատելու, թե արդյոք կատարվել է իրավական պայմանը հիմնական գործունեության հետ չկապված ծախսեր չկրելու, փոխառություններ չվերցնելու և չտալու վերաբերյալ, ինչպես սահմանված է Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագրի՝ Համաշխարհային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված Վարկային համաձայնագրում և դրա հետ կապված այլ փաստաթղթերում:

5.2 The audit shall also comprise examination of the ANPP expenses, received and provided borrowings, to verify whether the legal condition on not incurring any expenses, not receiving and not providing borrowings not related to the main activity was fulfilled, as prescribed by the Loan agreement signed between the World Bank and the Republic of Armenia and other related documents of Power sector financial recovery Project.

5.3 Ի կատարումն հիմնական գործունեության հետ չկապված ծախսեր չկրելու, փոխառություններ չվերցնելու և չտալու վերաբերյալ իրավական պայմանի, ինչպես սահմանված է Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագրի՝ Համաշխարհային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված Վարկային համաձայնագրում և դրա հետ կապված այլ փաստաթղթերում, ենթադրվում է, որ աուդիտորը պետք է հատուկ ուշադրություն դարձնի համապատասխան չափանիշներին, որոնք սահմանված են ֆինանսավորման համաձայնագրի պայմաններում և մանրամասն նկարագրված են Ծրագրի գնահատման փաստաթղթում, այդ թվում հետևյալ սահմանումներին և

5.3 According to the legal condition on not incurring any expenses, not receiving and not providing borrowings not related to the main activity, as prescribed by the Loan agreement signed between the World Bank and the Republic of Armenia and other related documents of Power sector financial recovery Project, it is suggested that the auditor should particularly pay attention to corresponding criteria, that are determined in conditions of the financing agreement and are described in assessment document of the Project in detail, and particularly to

չափանիշներին.

- 5.3.1 ՀԱԷԿ-ի՝ պարտականություն չկրելու որևէ ծախսեր, պարտքեր կամ որևէ պարտավորություններ, կամ տրամադրելու վարկեր կամ դրամաշնորհներ՝ հիմնական գործունեություն հանդիսացող էլեկտրաէներգիայի արտադրության ծառայություններ մատուցելու հետ չկապված նպատակների համար: Այս պարբերության նպատակների համար.
- (ա) «Պարտք» տերմինը նշանակում է դրամական գումարներ վճարելու որևէ պարտավորություն (որը առաջացել է որպես մայր գումար կամ երաշխիք)՝ լինի ներկա, թե ապագա, փաստացի, թե պայմանական.
- (բ) «Պարտքը» համարվում է ձևավորված (Ա) վարկային պայմանագրի կամ համաձայնագրի կամ այլ գործիքի շրջանակում, որը սահմանում է այդպիսի պարտք կամ դրա մարման պայմանների փոփոխություն՝ այդ պայմանագրի, համաձայնագրի կամ գործիքի ամսաթվով, (Բ) երաշխիքի համաձայնագրի շրջանակում այդպիսի երաշխիքի տվող համաձայնագրի՝ ուժի մեջ մտնելու ամսաթվով, և/կամ (Գ) ցանկացած այլ գործարք, որն հանգեցնում է պարտավորությունների ստեղծման:
- (գ) «Դրամաշնորհներ» տերմինը նշանակում է ֆինանսավորման տրամադրում մեկ այլ մարմնի՝ առանց այդ մարմնի կողմից մարելու պարտականության:
- (դ) «Վարկեր» տերմինը նշանակում է ֆինանսավորման տրամադրում մեկ այլ մարմնի՝ մարմնի կողմից մարելու պարտավորությամբ:
- (ե) «Հիմնական գործունեություն» տերմինը նշանակում է էներգիայի արտադրություն (էլեկտրական և/ կամ ջերմային) ՀԱԷԿ-ին պատկանող կամ նրա կողմից վերահսկվող կայանների միջոցով և վաճառք Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգիայի և/կամ ջերմային էներգիայի փոխադրման և/կամ

the following definitions and criteria:

- 5.3.1 The ANPP's responsibility of not incurring any expenses, debts or liabilities, or not providing loans or grants for purposes not related to the main activity of providing electric power services. For the purposes of this paragraph:
- (a) "Debt" is present or future, factual or conventional liability (which has arisen as principal amount or guarantee) to pay cash.
- (b) "Debt" is considered to be generated (A) in the scope of loan contract or agreement or other instrument, which determines such debt or change in its payment at the date of that contract, agreement or instrument, (B) in the scope of guarantee agreement at the effective date of the agreement of that guarantee, and/or (C) any other transaction which results in origin of liabilities.
- (c) "Grant" is provision of financing to other body without obligation of payment by that body.
- (d) Term "loans" is provision of financing to other body with obligation of payment by that body.
- (e) "Main activity" means production of energy (electric and/or thermal) through stations owned or controlled by the ANPP and import and/or sale to the electric and/or thermal energy transmission and/or distribution stations of the Republic of Armenia.

բաշխիչ ցանցերին, և/կամ արտահանում:

1.4 Հաջորդիվ բոլոր կետերը համապատասխանաբար փոխում են իրենց համարակալումը:

1.5 Հավելված № 1-ում նախատեսված ծառայության կատարման վերջնաժամկետը 2017 թվականի հունիսի 20-ը՝ շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ 2017 թվականի հունիսի 30-ը:

2. Պայմանագրի մյուս դրույթները թողնել անփոփոխ:

3. Սույն Լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 24.03.2017թ. № 15/019 Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 30-ը հունիսի 2017 թվականը ներառյալ:

4. Սույն Լրացուցիչ համաձայնագիրը կնքված է երկու հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակից՝ յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ:

1.4 All consequent points change their numbering correspondingly.

1.5 To narrate the deadline of implementation of the service foreseen in the Appendix №1, which is June 20, 2017 as follows: **June 30, 2017.**

2. Other provisions of the Agreement shall remain unchanged.

3. This Additional Agreement forms an integral part of the Agreement № 15/019 dated 24.03.2017 and is effective from the date of signing and shall expire on June 30, 2017.

4. This Additional Agreement shall be signed in two equal copies, a copy to each Party.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՀԱԷԿ» ՓԲԸ

ԿԱՏԱՐՈՂ

«Գրանթ Թորնթոն Աուդիտ» ՍՊԸ



Վ. Պետրոսյան


Գր. Գրանթ Թորնթոն Ա. Հարցառնյալ

Գր. Կարեն Ե. Զ. Դանիելյան

Գր. Կարեն Գրանթ. Գ. Մանուկյան

ՆՊԲ Կարեն Մ. Նիզամյան

ՆՊԲ Կարեն Մ. Հարցառնյալ



Օ. Բրայդ